



## ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՀՈՒՇԱԳԻՐ

ք. Երևան

- 2014 թ.

Հայաստանի Հանրապետության սփյուռքի նախարարությունը մի կողմից և «Դեպի Հայք» հիմնադրամը մյուս կողմից, (այսուհետ՝ Կողմեր), կարևորելով Հայաստան-Սփյուռք գործակցության զարգացումը, Հայրենիքի և Սփյուռքի միջև սոցիալական, մշակութային և տնտեսական կապերի էլ ավելի ամրապնդման անհրաժեշտությունը, կնքեցին սույն համագործակցության հուշագիրը (այսուհետ՝ Հուշագիր) հետևյալի մասին՝

1. Կողմերը կամրապնդեն սփյուռքահայ երիտասարդների կապը Հայրենիքի հետ՝ հնարավորություն տալով նրանց մասնակցել Հայաստանի առօրյա կյանքին և ներդրում ունենալ Հայրենիքի զարգացման գործում կամավորական աշխատանքի միջոցով,

2. Կողմերը կնպաստեն հայաստանցի և սփյուռքի երիտասարդների միջև կապերի ամրապնդմանը,

3. Կողմերը կմշակեն և համատեղ կիրականացնեն հայապահպանությանը նպաստող և հայրենադարձությունը խթանող, Հայաստանում և Արցախում սփյուռքահայ երիտասարդների ներուժի օգտագործման ծրագրեր,

4. Կողմերը կաջակցեն սփյուռքահայ երիտասարդության հայրենասիրական դաստիարակությանն ու լեզվապահպանությանը, դեպի Հայաստան սփյուռքի երիտասարդների ուխտագնացությանը,

5. Կողմերը միջոցներ կձեռնարկեն երիտասարդների շրջանում մայրենի լեզվի իմացության մակարդակի բարձրացմանը, ինչպես նաև սփյուռքահայ երիտասարդների օտար լեզուների իմացությունը կօգտագործեն հայաստանյան երտասարդների լեզվական գիտելիքների կատարելագործման համար,

6. Սփյուռքից ժամանած երիտասարդները մասնակից կդառնան նախարարության կողմից կազմակերպվող ծրագրերի նախապատրաստման, իրականացման աշխատանքներին:

7. Կողմերի միջև փոխադարձ համաձայնությամբ Հուշագրում կարող են կատարվել փոփոխություններ և լրացումներ, որոնք կամրագրվեն առանձին արձանագրությամբ:

Արձանագրությունն ուժի մեջ կմտնի սույն Հուշագրի ուժի մեջ մտնելու համար սահմանված կարգով և կհանդիսանա Հուշագրի բաղկացուցիչ մասը:

8. Հուշագրի դադարեցումը չպետք է ազդի դրա գործողության ընթացքում սկսված ծրագրերի վրա, եթե Կողմերն այլ համաձայնության չեն եկել:

9. Հուշագիրը կազմված է երկու օրինակից՝ յուրաքանչյուր կողմին մեկական օրինակ, որոնք ունեն հավասարազոր իրավական ուժ:

10. Հուշագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՍՓՅՈՒՌԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ  
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ**

**ՖԻՐՂՈՒՍ ԶԱՔԱՐՅԱՆ**  
  


**«ԴԵՊԻ ՀԱՅՔ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ  
ԳՈՐԾԱԴԻՐ ՏՆՕՐԵՆ**

**ՍԵՎԱՆ ԿԱՔԱԿՅԱՆ**  
  
